

կատարուելով՝ տեղի կ'ունենար երկրորդական կողակի մը մէջ. այն տեղէն է որ այս ընծաները հանդիսաւորութեամբ կը փոխադրուէին զլիսաւոր կողակին մէջ հաստատուած սեղանը: Խորհրդականցին հակառակ կողմէն բացուած երրորդ կողակ մը կը կոչուէր աստիաւագատուն՝ մեծ աւանդատան հետ ունեցած մերձաւորութեան պատճառաւ: Յոյներէն ոմանք կը կարծեն թէ Յուստինիանոս հրեշտակներուն պատուէրին համաձայն որոշած էր Ս. Սովիալի մէջ երրեակ կոնք մը ստեղծել: Պէտք կ'ըլլայ ըսել թէ Կ. Պոլսի և նոյն իսկ կայսրութեան մէջ տյգպիսի մասնայատկութիւն մը այդ թուականէն յառաջ շատ քիչ տարածուած էր: Այդ ձեռնարկին մէջ կը տեսնուէր Ս. Երրորդութեան խորհրդանշանը, ինչպէս նաև խաչին պատկերը: Սակայն պէտք է գիտնալ որ «խաչաձև» բառը ի հարկէ չ'ենթադրեր խաչի բաղուկներուն հաւասարութիւնը. ան կը յարմարի նմանապէս եկեղեցիի մը, որուն երկար կոնքերը (nefs) կը յենուն սրբավայրի մը՝ օժտուած երեք կողակներով որ բացուած են միեւնոյն գլխին Վրայ, բայց անոնց երկուքը, հիւսիսայինը և հարաւայինը, իրարու երես կը նային արեւելեան կողակին հետ կազմելով տեսակ մը առուոյտ, ինչպէս են օրինակի համար Շնուտիի եգիպտական վանքերու եկեղեցիները: Անոնց, որ եղջերուաքաղ կը նկատեն գոյութիւն ունեցող եկեղեցիներուն ծիսական և ճարտարապետական նոր պահանջներուն յարմարումը, թանձրացեալ օրինակ մը յառաջ կը բերենք, այն է Կ. Պոլսի Վլաչէրնի Ս. Աստուածածին եկեղեցին: Այս տաճարը որ 450էն յետոյ Մարկիանոսէն և Պաղքերիայէն շինուած էր, մինչև Յուստինոս Բ. (565-578) պահեց միակ կողակ մը, զոր ունէր իր հիմնարկութեան ժամանակ: Բայց այս կայսրը, յարգելով իր նախորդներուն դեռ հաստատուն մնացած գործը, պարտք կը համարի այս եկեղեցիին խաչի մը ձևը տալ՝ աւելցնել տալով կողակ մը հիւսիսային կողմը և կողակ մըն ալ հարաւային կողմը: Արդեօք նմանապէս չ'են օգտուած Երուսաղէմի մէջ Ս. Յարութեան Կոստանդինեան բոլորչի եկեղեցին օժտելու նոյն եղանակով, 614ի պարսկական արշաւանքին տալիսով:

Գրիստոնէական շէնքերու նոր բաժանման ուրիշ մէկ տարր մը, այսինքն գալիք (narthex) շինելը Զ. դարուն խիստ տարածուն սովորութիւն մը եղած է: Յիշատակարաններէն դատելով, Երուսաղէմի մէջ զաւելթ ունեցող առաջին եկեղեցին էր Ս. Աստուա-